

Հյկզ.), եւ ընթրակերոց (Փիլ. ճոք. 30), վերջինս Հեսեան ճգնաւորաց ճաշարանին համար ըսուած:

Ամէն բնակարան չէր կարող այդպիսի «տաճար» մ'ունենալ. բայց ամէն տնակ կրնար համեստ «ճաշարանի» մը վերածել, զէթ ուտելու պահուն միայն, իւր որ եւ է յարմար մէկ անկիւնը: Այս զանազանութիւնը մեծապէս զգալի կը լինի, երբ նկատենք որ «տաճարի» յիշատակութիւնը կապուած է միշտ մեծակառոյց շինուածոց հետ, ինչպէս էին հայ ազատանւոյն բնակարանք, «տունք ցանկալիք, բարձրածեղունք եւ մեծամեծք» (Լաստ. 35). եւ այդ բառով կը կոչուին ճաշարանք Արշակայ, Պապի (Փաւս. 67, 204) եւ առ հասարակ արքունեաց (Ազթ. 376), Յազկերտի (Եղիշ. 17), Արտագերց մեծ ամրոցին, սրբոյն Ներսեսի եւ Աշտիշատու հայրապետանոցին (Փաւս. 171, 77, 48), Սիւնեցի վասակայ, հայ տիկնանց (Եղիշ. 52, 174) եւ ուրիշ ազնուականաց (Մամ. 24). ինչպէս նաեւ Ս. Գրոց (Մակ. Ա, ժԶ, 16. Գ, Գ, 13. Ե, 8) եւ այլ թարգմանութեանց մէջ: Հայոց արքունեացը մանաւանդ այնչափ ընդարձակ էր, որ անոր մինչեւ «ինն հարիւր» հոգի բովանդակելը կը յիշուի (Փաւս. 67): Տաճարն իւր կարեւորու-